ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ 3

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Երևանի քաղաքապետի 11.07.2012 թվականի թիվ 84 հանձնարարագրով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության աշխատակիցներ Հ. Գրիգորյանին և Կ. Պողոսյանին հանձնարարվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1-ին հոդվածի համաձայն՝ օրենքի պահանջների կատարման նկատմամբ իրականացնել հսկողություն «Գանձ» ՍՊԸ -ում:

2. 11.07.2012 թվականին կազմվել է թիվ 002658 արձանագրությունը, համաձայն որի՝ հսկողություն է իրականացվել «Գանձ» ՍՊԸ-ի ք. Երևան, Թումանյան փողոցի 34 շենքին կից գտնվող առևտրի օբյեկտում և արձանագրվել է. «... «Գանձ» ՍՊԸ-ի տնօրեն Գրիգոր Մարտիրոսյանի կողմից Թումանյան 34 շենքին կից գտնվող առևտրի օբյեկտում իրականացվում էր պիտանելիության ժամկետն անցած ապրանքների վաճառք (խմորեղեն, հալած պանիր)»:

3. Երևանի քաղաքապետարանի վարչական իրավախախտումների գործերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման նախապատրաստման և հաշվառման աշխատանքներ իրականացնող հանձնաժողովի կողմից 22.07.2012 թվականին կազմվել է թիվ Վ-10/30 արձանագրությունը, համաձայն որի՝ Գրիգոր Մարտիրոսյանի կողմից՝ ք. Երևան, Թումանյան փողոցի 34 շենքին կից գտնվող սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի օբյեկտում իրականացվել է պիտանիության ժամկետն անցած ապրանքների՝ խմորեղենի, հալած պանրի տեսականու իրացում, ինչի առնչությամբ Գրիգոր Մարտիրոսյանի կողմից տրվել է բացատրություն:

5. Թիվ 002658 արձանագրության հիման վրա Երևանի քաղաքապետի 22.07.2012 թվականի թիվ Վ-10/30 որոշմամբ «Գանձ» ՍՊԸ-ի տնօրեն Գրիգոր Մարտիրոսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան՝ նրա նկատմամբ նշանակվել է «տուգանք» վարչական տույժը՝ 150.000 ՀՀ դրամի չափով: Որոշման մեջ տուգանքի չափի ընտրությունը չի հիմնավորվել:

6. 19.08.2013 թվականին Գրիգոր Մարտիրոսյանը (այսուհետ նաև Հայցվոր) հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ պահանջելով անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 22.07.2012 թվականի թիվ Վ-10/30 որոշումը:

ՀԱՅՑՎՈՐԻ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

Հայցվորի պնդմամբ, հայցը ենթակա է բավարարման, քանի որ խանութում պիտանիության ժամկետն անցած ապրանքներ չեն վաճառվել, իսկ դրանց՝ խանութում գտնվելու փաստն ինքնին վարչական պատասխանատվության ենթարկելու հիմք չի կարող հանդիսանալ: Ինքը բացատրություն է տվել այն մասին, որ հայտնաբերված ապրանքները պարզապես առանձնացված են եղել մատակարարին հետ վերադարձնելու նպատակով և վաճառքի ենթակա չեն եղել: Պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի փաստը քաղաքապետարանի աշխատակիցները չեն հիմնավորել:

Հայցվորի պնդմամբ, ինքը արձանագրությունը ստորագրել է միայն «ստացա» սյունակում և ստացել այն՝ իր իրավունքները դատական կարգով պաշտպանելու նպատակով:

Հայցվորի պնդմամբ, Պատասխանողը պարտավոր էր հաշվի առնել օրենքի՝ գրավոր վարչական ակտին ներկայացվող և դրա հիմնավորման վերաբերյալ պահանջները:

Հայցվորի պնդմամբ, իրեն 150.000 ՀՀ դրամի չափով տուգանելու մասին որոշումը ոչ իրավաչափ է նաև այն պատճառով, որ Պատասխանողի որոշման մեջ տուգանքի չափի ընտրությունը որևէ կերպ չի հիմնավորվել:

ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

Ըստ Պատասխանողի ներկայացուցիչ Հասմիկ Գևորգյանի՝ վարույթի ընթացքում Հայցվորը տվել է բանավոր բացատրություն՝ ընդունելով իրավախախտումը: Սղագրությունը հնարավոր է պահպանված չլինի: Ստորագրելով արձանագրությունը՝ Հայցվորն, ըստ էության, ընդունել է իրավախախտման կատարման փաստը:

Ըստ Պատասխանողի ներկայացուցչի, Պատասխանողն իրականացրել է հայեցողական լիազորություն՝ տուգանքի չափն ընտրելով օրենքով սահմանված չափերի սահմաններում և այն հիմնավորման կարիք չունի:

ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Հարցադրում 1.

Հիմնավո՞ր է արդյոք Հայցվորի պնդումն առ այն, որ խանութում պիտանիության ժամկետն անցած ապրանքների խանութում գտնվելու փաստն ինքնին վարչական պատասխանատվության ենթարկելու հիմք չի կարող հանդիսանալ: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 2.

Ի՞նչ կարևոր վավերապայմանների առկայության պարագայում վարչական իրավախախտման վերաբերյալ կազմված թիվ Վ-10/30 արձանագրությունը կարող է բավարար հիմք հանդիսանալ Հայցվորին վարչական պատասխանատվության ենթարկելու համար: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 3.

Հիմնավո՞ր է արդյոք Հայցվորի պնդումն առ այն, որ Պատասխանողը պարտավոր էր ամբողջությամբ հաշվի առնել օրենքի՝ գրավոր վարչական ակտին ներկայացվող և դրա հիմնավորման վերաբերյալ պահանջները: Հիմնավորե՛ք պատասխանը:

Հարցադրում 4.

Հիմնավո՞ր է արդյոք Պատասխանողի ներկայացուցչի պնդումն առ այն, որ Պատասխանողն իրականացրել է հայեցողական լիազորություն՝ տուգանքի չափն ընտրելով օրենքով սահմանված չափերի սահմաններում, ինչը հիմնավորման կարիք չունի: Հիմնավորե՛ք պատասխանը:

<u>Հարցադրում 5.</u>

Համեմատե՛ք տվյալ իրավական խնդրի փաստական հանգամանքները կից ներկայացված փաստական հանգամանքների հետ: Նշե՛ք նմանությունները և տարբերությունները, ինչպես նաև գնահատե՛ք, թե դրանցից որո՞նք են գործի լուծման համար էականները: Հիմնավորե՛ք պատասխանը:

ՀԱՐՑԱԴՐՈՒՄ 5՝ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Երևանի քաղաքապետարանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի 22.09.2017 թվականի թիվ 54 հանձնարարագրի հիման վրա «Արեգակ» ՍՊ ընկերությունում (այսուհետ Ընկերություն) իրականացվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողություն:

Երևանի քաղաքապետարանի 22.09.2017 թվականի թիվ 004573 արձանագրությամբ որպես խախտում արձանագրվել է, որ Ընկերությունում 22.09.2017 թվականին վաճառվում էր պիտանելիության ժամկետն անցած «Նարինե» կաթնամթերք՝ 5 հատ: Արձանագրությանը կցվել են նշված ապրանքների լուսանկարները, ինչպես նաև նույն ապրանքները պատկերող տեսանյութ, որով հաստատվում է, որ ապրանքների պիտանելիության ժամկետն ավարտվել է 21.09.2017 թվականին:

Երևանի քաղաքապետի 22.09.2017 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-84/9 որոշմամբ Ընկերության տնօրենի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան, նշանակվել է վարչական տուգանք՝ 150.000 ՀՀ դրամի չափով: Որոշման մեջ տուգանքի չափի ընտրությունը չի հիմնավորվել:

10.10.2017 թվականին Ընկերության տնօրենը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ պահանջելով անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 22.09.2017 թվականի թիվ Վ-84/9 որոշումը:

«Հրաշք» ՍՊԸ-ի (Վաճառող) և Ընկերության (Գնորդ) միջև 15.05.2017 թվականին կնքվել է առուվաճառքի պայմանագիր, որի առարկան է հանդիսանում «Նարինե» կաթնամթերքը: Պայմանագրի 2.1.2-րդ կետով Վաճառողը պարտավորվել է փոխել ժամկետանց ապրանքը նորով:

«Հրաշք» ՍՊԸ-ի կողմից 22.09.2017 թվականին տրված հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ 22.09.2017 թվականին Ընկերությանն առաքվել է թվով 8 հատ «Նարինե» կաթնամթերք:

Միաժամանակ, «Հրաշք» ՍՊԸ-ի 22.09.2017 թվականի նամակ-պատասխանով Ընկերության տնօրենին հայտնվել է, որ հին ապրանքի փոխարինումը նորով 21.09.2017 թվականին չի կատարվել մեքենայի անսարքության պատճառով, իսկ հաջորդ օրն առաքիչը պետք է մոտենար ժամը 15:00-ից հետո: